ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄՆ ՈՒ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ (1918 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ)

ՄԱՐՈՒՔՅԱՆ Ա. Յ.

Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության ջախջախիչ պարտությունը հանգեցրեց Մուդրոսի զինադադարի ստորագրմանը (30.X.1918 թ.), ինչից հետո «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը լուծարվեց, իսկ դրա յոթ պարագլուխները նոյեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը փախուստի դիմեցին: Պատերազմի ընթացքում երիտթուրքերի գործելաոճից ահաբեկված և ձայնազուրկ ուժերը քաղաքական նոր իրավիճակում իրենց բողոքի ձայնը բարձրացրին և սկսեցին դատապարտել այդ վարչակարգի իրականացրած հանցագործությունները: Մամուլի էջերում հնչող քննադատությունը շուտով տեղափոխվեց օսմանյան խորհրդարանի դահլիճ, որն իր գործունեությունը վերսկսեց 1918 թ. հոկտեմբերի 10-ին:

1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հայերի ցեղասպանության հարցը քննարկվեց օսմանյան խորհրդարանի հինգ նիստերում, որոնց մասնակցում էին 12 հայ պատգամավորներից միայն 6-ը՝ Սսից ընտրված Մատթեոս Նալբանդյանը, Զմյուռնիայից՝ Օննիկ Իհսանը, Էրզրումից՝ Հովսեփ Մադաթյանը, Հալեպից՝ Արթին Բոշկեզենյանը, Մարաշից՝ Հակոբ Խրլաքյանը, Սեբաստիայից՝ Տիգրան Պարսամյանը: Նիստերին չէին մասնակցում Մուշի երկու հայ պատգամավորները՝ Գեղամ Տեր-Կարապետյանը, որն անկողնային հիվանդ էր, և երկրից դուրս գտնվող Վահան Փափազյանը (Կոմս) և Պոլսից ընտրված Պետրոս Հալաջյանը: Երիտթուրքերի կողմից մինչ այդ սպանվել էին պատգամավորներ Գրիգոր Զոհրապը, Վարդգես Սեբենկյուլյանը և Օննիկ Դերձակյանը (Վռամյան): Այս առումով հարց է առաջանում, թե ինչպես պատահեց, որ Զոհրապին, Վարդգեսին և Վռամյանին վերացրած երիտթուրքական կառավարությունը նույն ճակատագրին չարժանացրեց երկրում մնացած մյուս հայ պատգամավորներին: Նշենք, որ նրանցից Գ. Տեր-Կարապետյանը չաքսորվեց միայն այն պատճառով, որ գամված էր անկողնուն, և իշխանություններն ի դեմս նրա վտանգ չտեսան[1]: Սակայն նա շարունակում էր տարբեր վայրերից նամակներ ստանալ, հետևել տեղի ունեցող եղերական իրադարձություններին և

---

[1] **Տատրեան Վ.,** *Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, Ուոթրթաուն, 1995, էջ 59:*

հավաքած փաստերը հետա-գայում ներկայացրեց կառավարությանն ուղղված գրավոր հարցապնդման մեջ: Իսկ պատգամավոր Մատթեոս Նալբանդյանն աքսորից կարողացավ խուսափել միայն կաշառքի միջոցով՝ իր կալվածքների արժեքի կեսի չափով գումար տալով Ադանայի Իսմայիլ Հաքքը նահանգապետի եղբորը՝ Համիդին[2]: Ողջ մնացած մյուս հայ պատգամավորները կամ «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ էին, ինչպես, օրինակ, Տիգրան Պարսամյանը, կամ էլ այդ կուսակցության թույլտվությամբ թուրքերի քվեներով էին ընտրվել, ուստի իշխանություններն ի դեմս նրանց սպառնալիք չէին տեսնում: Այդ ամենը, սակայն, չխանգարեց, որ նրանք հետագայում օսմանյան խորհրդարանում հայ ժողովրդի բնաջնջման համար մեղադրեին ոչ միայն երիտթուրքական կառավարությանը, այլև ողջ թուրք ցեղին: Հայ պատգամավորների հնչեցրած մեղադրանքներին երբեմն միանում էին նիստերին մասնակցող 10 հույն պատգամավորներից մի քանիսը՝ Այդընից ընտրված Էմմանուելիդին, Թեքիր-դաղից՝ Էվկալիտիսը, Պոլսից՝ Հարալամ-պիսը, Տրապիզոնից՝ Գոֆիդին և Յուվանիդին:

Չնայած երիտթուրքական կուսակցության ինքնալուծարմանը, նախկին իթթիհա-դականները շարունակում էին մեծամասնություն կազմել խորհրդարանում: Խորհրդարանի խոսնակը նախկին կառավարությունում արտաքին գործերի և կարճ ժամանակով նաև արդարադատության նախարար Թալեաթի մտերիմ Հալիլն էր, որը հե-տագայում ի թիվս այլոց ձերբակալվեց հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով[3]: Իթթիհադական մեծամասնությունից բացի, հայ պատգամավորների գործը զգալիորեն բարդանում էր նաև խորհրդարանի կանոնակարգի սահմանափակող դրույթներով, որոնց համաձայն, կոնկրետ հարցերով կառավարության ներկայացուցչին խորհրդարան հրավիրելու և նրան հարցապնդում ներկայացնելու համար քսան պատգամավորների ստորագրությամբ պահանջագիր էր հարկավոր: Փաստորեն, հույները, հայերը և հրեաները, որոնց պատգամավորների թիվը չէր հասնում քսանի, զրկված էին այդ իրավունքից: Հայ պատգամավորները հարկադրված էին կանոնակարգի այս անարդարացի սահմանափակումը խախտել և կառավա-րության անդամներին հարցապնդում ներկայացնել այլ հարցերի, օրինակ՝ կառավարության վստահության քվեի քննարկման ժամանակ: Հատկանշական է, որ հայ պատգամավորներն օսմանյան խորհրդարանում գործում էին կազմակերպված, օգնում էին միմյանց, երբ իթթիհադական մեծամասնությունը փորձում էր ճնշում գոր-ծադրել նրանցից որևէ մեկի վրա և համագործակցում էին հույն պատգամավորների հետ:

---

[2] *Նույն տեղում, էջ 99:*

[3] *Նույն տեղում, էջ 74:*

Պետք է նշել, որ դեռ հոկտեմբերի 28-ին արաբ պատգամավոր Ֆուադ բեյի կողմից պատրաստվել էր պատերազմի ընթացքում երիտթուրքական վարչակարգի իրականացրած հանցագործությունները հետաքննելու վերաբերյալ 10 կետից բաղկացած հարցապնդում, որի միայն երկու կետերն էին վերաբերում հայերի բնաջնջման հարցին, այն էլ՝ բավական անորոշ ձևակերպումներով: Ֆուադ բեյն իր գրավոր առաջարկի 5-րդ կետում «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքն ու դրա լրացումները որակում էր որպես մարդկային և իրավական կանոններին ամբողջովին հակասող և օսմանյան Սահմանադրության ոգին ու բավանդակությունը ոտնահարող օրենքներ, հրամաններ և կանոնադրություններ, որոնք երկիրը վերածեցին ողբերգական թատերաբեմի[4]: 10-րդ կետով էլ, ակնարկելով «Հատուկ կազմակերպությանը», արաբ պատգամավորը նշում էր, որ երիտթուրքերը երկրում քաոս և խառնաշփոթ ստեղծելով՝ իրենց իսկ ստեղծած ավազակախմբերի միջոցով մարդկանց կյանքի և սեփականության դեմ կատարված ծանր հանցագործությունների մասնակիցը դարձան[5]: Կարելի է ենթադրել, որ Ֆուադ բեյը, խորհրդարանում նախկին իթթիհադականների ձայների մեծամասնություն ունենալու հանգամանքը հաշվի առնելով, միտումնավոր չէր շեշտադրել հայերի կոտորածները, որպեսզի վերջիններս, այդ պատրվակն օգտագործելով, չտապալեն իր առաջարկությունը: Արաբ պատգամավորն իր գրավոր առաջարկությունը նոյեմբերի 2-ին ներկայացրեց խորհրդարանի նախագահությանը, իսկ նոյեմբերի 4-ին այն քննարկման առարկա դարձավ:

Նոյեմբերի 4-ի նիստում ներկայացվեց նաև հայ պատգամավոր Մ. Նալբանդյանի գրավոր հարցապնդումը, որը ստորագրված էր նաև նիստին մասնակցող մյուս հայ պատգամավորների՝ Հ. Խրլաքյանի, Օ. Իհսանի, Ա. Բոշկեզենյանի, Հ. Մադաթյանի և Տ. Պարսամյանի կողմից: Հայ պատգամավորները ցանկանում էին պարզել նոր կառավարության դիրքորոշումը օսմանյան Սահմանադրությանը հակասող՝ 1915 թ. մայիսի 27-ի «Տեղահանության մասին» և սեպտեմբերի 26-ի՝ «Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքների կիրառման հետևանքով իրականացված հանցագործությունների՝ սպանությունների, բռնաբարությունների, գույքի և ունեցվածքի բռնագրավումների, ինչպես նաև որբացածների և այրիացածների հետագա ճակատագրի վերաբերյալ: Այս հարցապնդումներին պատասխանեց նախկին իթթիհադական, նոր կառավարության ներքին գործերի նախարար Ալի Ֆեթհի Օքյարը, որը հնչեցրեց թուրքական ժխտողականության այն հայտնի դրույթը, թե պատերազմի

[4] **Ասատրյան Ա.**, *Դարի կողոպուտը. հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Ե., 2013, էջ 77:*

[5] **Kévorkian R.** *La Turquie fase à ses responsabilités. Le process des criminels jeunes-turcs (1918-1920), Revue d'histoire de la Shoah, janveir-août, 2003, p. 171.*

ժամանակ տուժել են ոչ միայն հայերը, հույները կամ արաբները, այլ նաև թուրքերը: Միևնույն ժամանակ, նախարարը կառավարության անունից խոստացավ պատժել հանցագործություններ կատարածներին, իրենց բնակավայրերը վերադարձնել տեղահանվածներին և հատուցել նրանց կրած վնասները՝ առաջարկելով, որ տուժողներն իրենց իրավունքները վերականգնելու համար մեղավորների դեմ բողոքներ ներկայացնեն: Հասկանալով նախարարի հետին միտքը, այն է՝ տուժածների մեծ մասն արդեն ոչնչացված է, իսկ ողջ մնացածներն էլ այնքան են ահաբեկված, որ չեն համարձակվի բողոք ներկայացնել, Մ. Նալբանդյանն անմիջապես արձագանքեց նախարարի խոսքին՝ նկատելով, որ անկախ բողոք ներկայացնելու հանգամանքից, հանցագործություններ բացահայտելու գործը կառավարությունը պետք է իր պարտականությունը համարի: Համաձայնվելով Նալբանդյանին, Ֆեթիին նշեց, որ այդ ամենը միանգամից անհնար է անել և խոստացավ տուժածների ոտնահարված իրավունքներն աստիճանաբար վերականգնել, իսկ հանցագործություններ կատարած պաշտոնյաներին ենթարկել պատասխանատվության[6]:

Քննարկումներին մասնակցած թուրք պատգամավոր Մեհմեդ Էմինը (Տրապիզոնից) իր ելույթում հատուկ անդրադարձավ հույն պատգամավոր Էմմանուելիդիի՝ հայերի զանգվածային կոտորածներին տված որակումներին՝ դրանք համարելով չափազանցված: Թուրք պատգամավորն առարկեց, որ միայն սպանված հայ կանանց ու երեխաների թիվը չի կարող մեկ միլիոն լինել, քանի որ դրան 500 հազար տղամարդկանց թիվն ավելացնելու դեպքում զոհված հայերի ընդհանուր քանակը կհասնի 1,5 միլիոնի[7]: Մ. Էմինը, ընդունելով, որ կայսրությունում մինչև պատերազմը հայ բնակչությունը 1 200 000 էր, նշում է, որ զոհված հայերի թիվը ճշտելու համար հենց դրանից պետք է հանել հայ վերապրողների թիվը[8]: Միանգամայն հասկանալի է, որ հայ բնակչության թվաքանակը և զոհված հայերի թիվը պակասեցնելու միջոցով թուրք պատգամավորը փորձում էր նվազեցնել հանցագործության ծավալները: Սակայն օսմանյան խորհրդարանում իր ելույթով նա ակամայից նշեց զոհված հայերի 1,5 միլիոն թիվը, որը հետագայում տարածում ստացավ աշխարհով մեկ:

Խոստովանելով, որ պետական պաշտոնյաները շատ ընտանիքների, կանանցով և երեխաներով հանդերձ, ոչնչացրեցին և նրանց ունեցվածքը կողոպտեցին, Մ. Էմինն անընդունելի համարեց հույն պատգամավոր Էմմանուելիդիի հնչեցրած՝ «հայերը

---

[6] *Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում (նյութերի ժողովածու), կազմող և առաջաբանի հեղինակ Բարսեղյան Լ., Ե., 2005, էջ 147:*

[7] **Տատրեան Վ.,** *նշվ. աշխ., էջ 17:*

[8] **Աստոյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 77:*

ջարդվեցին հայ լինելու համար» ձևակերպումը, անգամ վստահաբար պնդեց, թե դա չեն ընդունում նույնիսկ հայ պատգամավորները: Սակայն Ա. Բոշկեզենյանի՝ «Իսկ ինչու՞ ջարդվեցին» հարցից անակնկալի եկած Մ. Էմինը չկարողացավ պատասխան գտնել, և նիստերի դահլիճում խառնաշփոթ սկսվեց:

Խորհրդարանի օրակարգի հաջորդ՝ «Տեղահանության մասին» հարցը ժամանակավոր օրենքի ճակատագիրը որոշելու խնդիր էր: Այդ օրենքը չեղյալ համարելու պահանջով նախ հանդես էր եկել արաբ պատգամավոր Ֆուադ բեյը, իսկ այնուհետև՝ հինգ հայ պատգամավորներ միասնական պահանջ էին ներկայացրել ոչ միայն «Տեղահանության մասին», այլև «Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքները չեղյալ համարելու պահանջով: Իր ելույթում Ֆուադ բեյը, համերաշխելով հայ պատգամավորներին, նշեց, որ բացի «Տեղահանության մասին» օրենքից, կան դրա նման և դրանից էլ վատ ուրիշ օրենքներ, որոնք նույնպես պետք է վերացվեն: Արթին Բոշկեզենյանն էլ չբավարարվեց «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքի՝ թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ ապօրինի լինելը փաստելով և պահանջեց պատասխանատվության կանչել տվյալ օրենքը հանցավոր մտադրությամբ ընդունած և գործադրած անձանց[9]: Ներքին գործերի նախարար Ֆեթհի բեյն արձագանքեց, որ «Տեղահանության մասին» օրենքը ոչ թե կառավարությունը պետք է հետ կանչի, այլ չեղյալ համարվի խորհրդարանի կողմից: Խորհրդարանի քվեարկությանը դրվեց այդ օրենքի չեղարկման հարցը, և դրա արդյունքներով այն չեղյալ համարվեց: Քվեարկությունից հետո Արթին Բոշկեզենյանը և Ֆուադ բեյը բողոքեցին, որ հատուկ չնշվեց, թե ինչ հիմքով չեղյալ համարվեց օրենքը. նրանք պահանջում էին հատուկ շեշտել, թե տվյալ օրենքը չեղյալ համարվեց հակասահմանադրական լինելու պատճառով: Սակայն խորհրդարանի խոսնակը հայտարարեց, որ օրենքը չեղարկվել է, և դրա համար հիմնավորում չի պահանջվում[10]: Թեև խորհրդարանի խոսնակն ամեն կերպ խուսափեց նշել չեղարկված օրենքի հակասահմանադրական բնույթը, այդուհանդերձ, դա շեշտվում էր ինչպես արաբ և հայ պատգամավորների գրավոր հարցապնդումներում, այնպես էլ մյուս պատգամավորների ելույթներում, ուստի այդ օրենքի չեղարկման հիմքը միանգամայն ակնառու երևում է խորհրդարանի այդ օրվա նիստի սղագրությունից:

Նոյեմբերի 4-ի նիստի վերջում խորհրդարանի նախագահը հրապարակեց այդ օրվա օրակարգի դեռևս չքննարկված հարցերը, որոնց թվում էր պատերազմի ժամանակ կատարված հանցագործությունները հետաքննող մարմին ստեղծելու խնդիրը, որը քննարկման արժանացավ հաջորդ նիստերի ընթացքում: Նշենք, որ այս նախաձեռ-

---

[9] *Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները…, էջ 148:*

[10] **Տատրեան Վ.,** *նշվ. աշխ., էջ 19:*

նության շնորհիվ հետագայում ձևավորվեց խորհրդարանական Հինգերորդ հանձնաժողովը, որը զբաղվելու էր պատերազմի ժամանակ կատարված հանցագործությունների հետաքննությամբ:

«Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքի չեղարկումից հետո Հայոց ցեղասպանության հարցի քննարկումը օսմանյան խորհրդարանում ոչ միայն չդադարեց, այլև ավելի բուռն կերպով շարունակվեց քննարկվել նոյեմբերի 18-ի նիստում, որտեղ գլխավորը նոր կառավարության վստահության հարցն էր, ուստի խորհրդարանի դահլիճում էին գտնվում պետական խորհրդի նախագահ Շերիֆ փաշան և կառավարության երեք նախարարները՝ արտաքին գործերի նախարար Մուսթաֆա Ռեշիդը, ներքին գործերի նախարարի պաշտոնում Ալի Ֆեթհի Օքյարին փոխարինած Մուսթաֆա Արիֆը, կրթության նախարար Ռիզա Թեվֆիքը, որը հետագայում ընդգրկվեց Սևրի հաշտության պայմանագիրը ստորագրող թուրքական պատվիրակության կազմում: Նիստի ընթացքում հանդես եկան հայ պատգամավորներ Ա. Բոշկեզենյանը, Տ. Պարսամյանը և Մ. Նալբանդյանը, որոնց ելույթների ժամանակ նիստերի դահլիճում մթնոլորտն այնքան շիկացավ, որ արտգործնախարարը նույնիսկ առաջարկեց նիստը շարունակել դռնփակ, սակայն նրա առաջարկը չընդունվեց:

Պատգամավոր Ա. Բոշկեզենյանը կրկին խոսեց հայերի կոտորածների մասին՝ շեշտելով, որ քաղաքակիրթ աշխարհը դրանում մեղադրում է թուրք ազգին. դա բուռն դժգոհություն առաջացրեց դահլիճում: Իթթիհադական մեծամասնության կողմից իր ելույթի ընդհատումը թույլ չտալու և նրանց իր խոսքն ընկալելի դարձնելու նպատակով Բոշկեզենյանը նման հանդուգն որակումներից հետո հայերի կոտորածների մեղադրանքի սլաքն ուղղեց դեպի երիտթուրքական կառավարությունը: Սակայն, խոսքը շարունակելով, նա կրկին վերադարձավ թուրք ազգի պատասխանատվության հարցին՝ նշելով, որ կառավարության հանցավոր քաղաքականությանը թուրք ազգը, այդուհանդերձ, մասնակցություն է ունեցել[11]: Դահլիճում իսկական իրարանցում առաջացրեց հայ կույսերին ապրանքի պես իրար մեջ բաժանողներին պատժելու՝ հայ պատգամավորի պահանջը և նույնիսկ Պոլսում պաշտպանություն վայելող անձանց մոտ հայ կույսերին թաքուն ստրկության մեջ պահելու փաստի հրապարակումը[12]: Ա. Բոշկեզենյանը դրանում մեղադրում էր թուրք պետական պաշտոնյաներին և պատգամավորներին, որոնց դժվար էր պատասխանատվության ենթարկել նրանց պաշտոնական դիրքի և անձեռնմխելիության պատճառով: Պատահական չէր, որ նրա հանդուգն մեղադրանքներն ազդեցին հատկապես հայ աղջիկներ առևանգողի համբավ ձեռք բերած՝ Մուշի պատգամավոր Իլյաս Սամիի վրա, որը նույնիսկ իթթիհադական

---

[11] *Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները…, էջ 151:*

[12] **Աստոյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 78:*

առաջնորդներին նվիրելու համար մի խումբ դեռատի հայ աղջիկներ էր իր հետ բերել Պոլիս[13]: Նա փորձեց ընդհատել Բոշկեզենյանի խոսքը՝ նշելով, որ վերջինս օրակարգից դուրս է խոսում, սակայն ստացավ հայ պատգամավորի շատ կոշտ պատասխանը, թե իրենք գտնվում են ոչ թե Մուշում կամ Բիթլիսում, այլ խորհրդարանում[14]: Ավարտելով իր խոսքը՝ Բոշկեզենյանը հինգ կետից բաղկացած պահանջագիր է ներկայացնում՝ 1. հանցագործ պաշտոնյաների պատժամիջոցների հաստատում, 2. գերեվարված և ստրկացրած կանանց և որբերի ազատ արձակում, 3. Ղեռավարության կողմից նրանց սննդի ապահովում, 4. ապրանքների և ունեցվածքի վերադարձի ապահովում, 5. վնասների հատուցում[15]: Կառավարությանն իր վստահության քվեն տալը հայ պատգամավորը պայմանավորում էր այս պահանջների կատարումով:

Նրա ելույթից հետո միայն խորհրդարանը վերադարձավ կառավարությանը վստահություն հայտնելու օրակարգային հարցի քննարկմանը, սակայն հույն պատգամավոր Էմմանուելիդին իր ելույթում կրկին անդրադարձավ հայերի կոտորածների հարցին և հայտարարեց, թե կառավարությանը վստահության քվե չի տալու, քանի որ վերջինս բռնագրավված գույքի դիմաց տուժածներին դեռևս որևէ հատուցում չի տվել: Տրապիզոնի թուրք պատգամավոր Մեհմեդ Էմինի ելույթից հետո դահլիճում խառնաշփոթ սկսվեց, քանի որ նա պաշտպանեց հայ և հույն պատգամավորների արդար պահանջները և հայտարարեց, որ կառավարությանը վստահության քվե տալու դեպքում խորհրդարանը կկորցնի իր արժանապատվությունը: Անգամ իր կուսակից Սինոպի պատգամավոր Հասան Ֆեհմիի հնչեցրած՝ «խոսքերդ հետ վերցրու» սպառնալից պահանջից հետո Մեհմեդ Էմինը անդրդվելի մնաց[16]:

Բացառիկ նշանակություն ուներ այս նիստին Սեբաստիայից թուրքերի քվեներով ընտրված «Թեջեդյութ» (Վերածնունդ) կուսակցությունը ներկայացնող հայ պատգամավոր Տիգրան Պարսամյանի ելույթը, որը խոսեց ոչ թե որպես կուսակցական, այլ որպես հայ ազգի ներկայացուցիչ: Նա բարձրացրեց Սիրիայի անապատներ աքսորված և դեռևս ողջ մնացած հարյուր հազարավոր հայերին (որոնց մեծ մասը կանայք և երեխաներ էին) օգնություն ցուցաբերելու հարցը՝ պահանջելով, որ կառավարությունն այդ գործը սկսի մինչև խաղաղության բանակցությունները:*

---

[13] **Տատրեան Վ.,** *նշվ. աշխ., էջ 94:*

[14] *Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները…, էջ 154:*

[15] *Նույն տեղում, էջ 154-155:*

[16] **Տատրեան Վ.,** *նշվ. աշխ., էջ 31:*

* *«Իթթիհադ վե թերաքքը» կուսակցությունը 1918 թ. վերջին ձևականորեն ինքնալուծարվեց և ընդհատակ անցավ, իսկ իր լեգալ գործունեությունը շարունակեց «Թեջեդյութ» կուսակցության անվան տակ, որը երկար կյանք չունեցավ:*

Նիստերի դահլիճում ներկա գտնվող կառավարության անդամները, հասկանալով, որ նման թեժ քննարկումները կարող են բացասաբար անդրադառնալ կառավարությանը վստահություն հայտնե լու հարցի վրա, ստիպված եղան միջամտել: Թեև արտգործնախարար Մուստաֆա Ռեշիդը խոստովանեց, որ հայերի դեմ իրականացված վայրագություններն առաջացրեցին մարդկության ցասումը և կայսրությունը վերածեցին հսկայական սպանդանոցի, սակայն առաջարկեց ժամանակավորապես դադարեցնել հայերի կոտորածների հարցի քննարկումը և վերադառնալ կառավարությանը վստահության քվե տալու օրակարգային հարցին[17]: Կառավարության անդամների մտավախությունները հիմնազուրկ չէին, քանզի այս քննարկումներն իսկապես որոշակի ազդեցություն էին ունեցել դահլիճում տիրող տրամադրությունների վրա: Քվեարկության արդյունքներով («կողմ»՝ 84, «դեմ» ՝ 27 և «ձեռնպահ» ՝ 3) խորհրդարանը վստահության քվե չտվեց կառավարությանը, քանի որ չհաջողվեց հավաքել նվազագույն ՝ 129 «կողմ» ձայները[18]:

Հայոց ցեղասպանության հարցը կրկին քննարկման առարկա դարձավ խորհրդարանի դեկտեմբերի 9-ի նիստում: Նախագահողը ցանկանում էր համառոտ ներկայացնել Մուշի հայ պատգամավոր Գեղամ Տեր-Կարապետյանի (որը ներկա չէր նիստերին հիվանդության պատճառով)՝ ներքին գործերի նախարարությանն ուղղած գրավոր հարցապնդման բովանդակությունը, սակայն Տիգրան Պարսամյանը համառելով ամբողջությամբ ընթերցեց Տեր-Կարապետյանի հարցապնդումը. դա կարևորվում էր այնքանով, որ, ի տարբերություն մյուս հայ պատգամավորների, Տեր-Կարապետյանն ընտրվել էր բացառապես հայերի քվեներով:

Նա արձանագրում է այն փաստը, որ թուրք պատգամավորների նշած թիվը՝ 100 հազարը, կազմում են միայն Սամսոնում, Գարահիսարում, Տրապիզոնում և Կիրասոնում նահատակված հայերը, իսկ Կարինի, Սեբաստիայի, Խարբերդի, Վանի և Տիգրանակերտի (Դիարբեքիր) նահանգներում և Ուրֆայի գավառում կոտորվել և ոչնչացվել են ավելի քան մեկ ու կես միլիոն հայեր[19]: Հատկանշական է, որ հայ պատգամավորը օսմանյան խորհրդարանում հրապարակում է Արևմտյան Հայաստանի միայն հինգ նահանգներում (առանց Բիթլիսի) և Ուրֆայի գավառում զոհված ավելի քան մեկ ու կես միլիոն հայերի թիվը: Անդրադառնալով իր ընտրական տարածքում՝ Մուշում և Բիթլիսում կատարված վայրագություններին, Տեր-Կարապետյանը նշում է, որ այնտեղ հայերի դեմ գործադրվեցին թնդանոթներ, որոնք հողին հավասարեցրին հայկական բնակավայրերը: Փաստորեն, նա արձանագրում է,

---

[17] **Kévorkian R.,** *նշվ. աշխ., էջ 188:*

[18] **Սատրեան Վ.,** *նշվ. աշխ., էջ 42:*

[19] *Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները…, էջ 155-156:*

որ Մուշի և Բիթլիսի հայերի կոտորածն իրականացվել է օսմանյան կանոնավոր բանակի ստորաբաժանումների կողմից: Հարցապնդման մեջ նաև խոսվում էր կոտորածներին զուգահեռ ընթացող՝ հայերի զանգվածային ունեզրկման մասին, երբ կողոպտվում էին ոչ միայն բոլոր հայերի շարժական և անշարժ գույքերը, այլև ավերակների վերածվող ազգային ու կրոնական կառույցներում՝ վանքերում ու եկեղեցիներում պահվող արժեքավոր իրերը[20]: Հայ պատգամավորը հատուկ նշում է հայ հոգևորականներին սպանելու, ինչպես նաև ոչնչացված հայերի որբ մնացած երեխաներին բռնի մահմեդականացնելու դեպքերի մասին: Տեր-Կարապետյանի հարցապնդումն ավարտում է կառավարության հասցեին ուղղած մեղադրանքով, այն է՝ դարեր շարունակ հայ ազգին պատկանող և օսմանյան սուլթանների հրովարտակներով հաստատված՝ հայերի նվիրական հայրենիքը հանդիսացող կայսրության արևելյան նահանգներում համընդհանուր կոտորածից փրկված և իրենց գոյությունը հազիվ քարշ տվող հայազգի վերապրողներին կառավարությունը որևէ օգնություն չի ցուցաբերում: Ընդհակառակը՝ նրանց պատկանող կալվածքներում և հողերում բնակեցնում է դրսից բերված գաղթականներին[21]: Հարցապնդման այս վերջին հատվածն իսկապես բացառիկ էր նրանով, որ հայ պատգամավորը խիզախություն ունեցավ Օսմանյան կայսրության արևելյան նահանգները, այսինքն՝ Արևմտյան Հայաստանը, **հայերի նվիրական հայրենիք** *անվանել՝ շեշտելով նաև այն հանգամանքը, որ այդ դարեր շարունակ հաստատվել է օսմանյան սուլթանների հրովարտակներով: Միևնույն ժամանակ, նա մեղադրեց կառավարությանը, որը հայերի հայրենիքում, նրանց կալվածքներում տեղավորում է մահմեդական վերաբնակիչներին: Թերևս, սա էր պատճառը, որ նիստի նախագահողը չէր ցանկանում, իսկ Պարսամյանն էլ համառում էր, որ հարցապնդումն ընթերցվի ամբողջությամբ՝ ի վերջո, հասնելով այն բանին, որ այդ մտքերը բարձրաձայն հնչեցին խորհրդարանի դահլիճում:*

Խորհրդարանի դեկտեմբերի 11-ի նիստում ելույթ ունեցավ նաև Տրապիզոնի պատգամավոր Մեհմեդ Էմինը, որը նշեց, որ անձամբ ներկա է եղել Սամսոնում և տեսել է, թե ինչպես Սամսոնի և Տրապիզոնի միջև գտնվող Օրդու Գազայի նավահանգստի կառավարիչը Սամսոն ուղարկելու պատրվակով հայերին լցրեց նավակների մեջ և բոլորին ծովում խեղդել տվեց: Նույն մեղադրանքը նա հնչեցրեց նաև Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիի հասցեին[22]: Միևնույն նահանգից ընտրված թուրք պատգամավորի ուղղած մեղադրանքը նահանգապետի հասցեին բացառիկ երևույթ էր օս մանյան խորհրդարանում:

---

[20] **Աստոյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 78:*

[21] *Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները…, էջ 156:*

[22] **Տատրեան Վ.,** *նշվ. աշխ., էջ 70:*

Դեկտեմբերի 12-ի նիստին խոսք վերցրեց Մատթեոս Նալբանդյանը, որը կրկին անդրադարձավ հայերի կոտորածներին: Սակայն երբ խոսնակ Հալիլը փորձեց ընդհատել նրան՝ պատճառաբանելով, թե քննարկումները վերաբերում են միայն Չաթալչայի և Էդիրնեի, այսինքն՝ հույների տեղահանության հարցին, Նալբանդյանն առարկեց, թե՝ «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը վերաբերել է ընդհանուրին, և շարունակեց խոսքը: Հայ պատգամավորը հատուկ անդրադարձավ մտավորականությանը ոչնչացնելու հարցին՝ եզրահանգելով, որ հայերի կոտորածներն իրականացվել են նախապես ծրագրված և համակարգված գործելու կերպով: Նա խոսեց նաև իր ընտանիքի՝ աքսորի ճանապարհին կրած տառապանքների մասին՝ նշելով, որ իրեն էլ էին ուզում աքսորել, եթե միջամտություն չլիներ: Պատմելով Սսից Պոլիս ճանապարհին հայերի նկատմամբ իրականացված վայրագությունների մասին, որոնց ինքն ականատես է եղել: Նալբանդյանը կասկածի տակ է դնում թուրք պատգամավորների այն տեսակետը, թե այդ ամենը երեքից հինգ մարդու գործ է՝ պահանջելով որ պատժվեն բոլորը, եթե անգամ մեղավորների թիվը 100 հազար էլ լինի[23]: Հայ պատգամավորն ակնարկում էր, որ գուցե կոտորածը ծրագրողներն ու հրաման արձակողները երեքից հինգ հոգի են, սակայն հայերի բնաջնջմանը մասնակցություն են ունեցել հարյուր հազարավոր թուրքեր: Նալբանդյանի այս խոսքերը խիստ ազդու էին, և նիստի վերջում ստիպված դրանց արձագանքեց ներքին գործերի նախարար Արիֆը՝ նշելով, որ եթե անգամ միլիոնավոր թուրքերից հարյուր հազարները մասնակցել են այդ հանցագործություններին, ապա ճիշտ չէ ամբողջ թուրք ցեղին դրա համար պատասխանատու համարել[24]:

Օսմանյան խորհրդարանի դահլիճում հայ պատգամավորը համարձակորեն հայտարարեց, որ միջազգային հանրությունը և զոհ դարձած ազգերն այս ամենի համար թուրքերից պետք է հաշիվ պահանջեն, և թուրքերը պետք է պատասխան տան[25]:

Այս նիստը եզրափակվեց Մ. Արիֆի ելույթով. նա նշեց, որ ինչպես խորհրդարանը, այնպես էլ կառավարությունը հաստատում են տեղի ունեցած դեպքերը, և ոչ ոք չի ասում, թե դրանք չեն պատահել[26]: Այսպիսով, թուրքական նոր կառավարության ներկայացուցիչը օսմանյան խորհրդարանում նույնպես ընդունեց Հայոց ցեղասպանության փաստը:

Օսմանյան խորհրդարանում Հայոց ցեղասպանության հարցի շուրջ ծավալված այս քննարկումների արդյունքը եղավ այն, որ արաբ պատգամավոր Ֆուադի առաջարկով, ի

---

[23] *Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները…, էջ 159:*

[24] **Սատրեան Վ.,** *նշվ. աշխ., էջ 86:*

[25] *Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները…, էջ 158:*

[26] **Kévorkian R.**, *նշվ. աշխ., էջ 175.*

վերջո, ձևավորվեց խորհրդարանական Հինգերորդ հանձնաժողովը, որը պետք է զբաղվեր պատերազմի ժամանակ երիտթուրքական կառավարության իրականացրած հանցագործությունների, այդ թվում՝ հայերի կոտորածների հետաքննությամբ: Հանձնաժողովի անդամների միջև վեճի առարկա դարձավ այն հարցը, թե որ դատական մարմինն է քննելու մեղավոր ճանաչված երիտթուրքական կառավարության անդամների գործը: Մեծամասնություն կազմող նախկին իթթիհադականները պնդում էին, որ նրանց գործը պետք է քննվի Գերագույն դատարանում, ընդ որում, նրանց այս պնդումն ամենևին էլ արարողակարգային բնույթի չէր: Բանն այն է, որ օսմանյան Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն, Գերագույն դատարանի 30 դատավորների կազմի 1/3-ը համամասնորեն ընտրվում էր Սենատի անդամներից, վճռաբեկ և վերաքննիչ դատարանների դատավորներից, որոնք իրենց պաշտոնները ստացել էին երիտթուրքերի կառավարության օրոք: Գերագույն դատարանում նախկին կառավարության անդամների դատավարությունը ֆարսի վերածելու իթթիհադականների մտադրությունը կռահելով՝ Հինգերորդ հանձնաժողովի պատգամավորների փոքրամասնությունը փորձում էր հասնել իսկական արդարադատության, ինչը հնարավոր էր իրականացնել միայն արտակարգ ռազմական ատյանների միջոցով[27]: Ի դեպ, նախկին՝ երիտթուրքական կառավարության անդամների փաստաբանները հետագայում թուրքական ռազմական ատյանում նույնպես փորձում էին վիճարկել այդ դատական մարմնի իրավազորությունն իրենց պաշտպանյալների նկատմամբ[28]: Հինգերորդ հանձնաժողովում այս հարցի ձգձգումների պատճառով 1918 թ. դեկտեմբերի 21-ին սուլթանը լուծարեց խորհրդարանը՝ այդպիսով վերջ դնելով նաև այդ հանձնաժողովի գոյությանը: Խորհրդարանի լուծարումից հետո պատգամավորները կորցրեցին իրենց անձեռնմխելիությունը, և նրանցից 24-ը ձերբակալվեցին[29]: Այդուհանդերձ, Հինգերորդ հանձնաժողովի գործունեության արդյունքը եղավ այն, որ 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին այն անցկացրեց 14 լսում, հարցաքննեց 15 նախարարների, որոնցից երկուսը՝ շեյխ-ուլ-իսլամ: Իր գործունեության կասեցումից հետո Հինգերորդ հանձնաժողովն իր տրամադրության տակ եղած փաստաթղթերի ամբողջ փաթեթը փոխանցեց ռազմական ատյանին[30]: Ի թիվս այլ ապացույցների, թուրքական ռազմական ատյանին փոխանցված նյութերը կարևոր նշանակություն ունեցան հայերի զանգվածային

---

[27] **Տատրեան Վ.,** *նշվ. աշխ., էջ 11:*

[28] *Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Ե., 1988, էջ 16:*

[29] **Kévorkian R.,** *նշվ. աշխ., էջ 188:*

[30] **Տերնոն Ի.,** *Անպատժելիություն, վրեժ և ժխտում. Հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Ե., 2003, էջ 20:*

կոտորածներն իրականացնելու մեջ երիտթուրքական կառավարության անդամների պատասխանատվությունը հաստատելու և նրանց դատապարտելու գործում:

Ամփոփելով օսմանյան խորհրդարանում 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների հինգ նիստերին հայ պատգամավորների գործուն մասնակցությամբ ծավալված քննարկումները Հայոց ցեղասպանության հարցի շուրջ՝ կարող ենք արձանագրել, որ.

1. Նոյեմբերի 4-ին Օսմանյան կայսրության օրենսդիր մարմինը, չեղարկելով իր կողմից երբևէ չհաստատված երիտթուրքական կառավարության ընդունած և ապօրինաբար գործադրած 1915 թ.՝ մայիսի 27-ի «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը, որը հանցավոր վարչակարգի համար «իրավական հիմք» դարձավ հայերի զանգվածային բռնագաղթն ու բնաջնջումն իրականացնելու համար, փաստորեն, ճանաչեց երիտթուրքական կառավարության իրականացրած Հայոց ցեղասպանության փաստը,

2. Թեև թուրքական նոր կառավարության անդամները խորհրդարանի դահլիճում նույնպես հրապարակայնորեն ընդունեցին Հայոց ցեղասպանության փաստը, այդուհանդերձ, նոյեմբերի 18-ին այդ հարցի շուրջ ծավալված բուռն քննարկումները որոշակիորեն ազդեցին նոր կառավարությանը վստահության քվե չտալու՝ օսմանյան խորհրդարանի որոշման վրա,

3. Պատերազմի ընթացքում նախկին՝ երիտթուրքական կառավարության կատարած հանցագործությունները, այդ թվում՝ հայերի զանգվածային կոտորածները հետաքննելու նպատակով ստեղծվեց խորհրդարանական Հինգերորդ հանձնաժողովը, որը թեև խորհրդարանի լուծարման պատճառով երկար չգործեց, սակայն արտաքին ազդակների, մասնավորապես՝ հաղթանակած տերությունների կողմից միջազգային ատյան ստեղծելու մտադրության հետ մեկտեղ, խթան հանդիսացավ, նախ, կառավարության հետաքննիչ հանձնաժողովի, այնուհետև՝ ռազմական ատյանների ստեղծման համար, որոնց վճիռներով երիտթուրքական կառավարության անդամները, ի թիվս այլ հանցագործությունների, դատապարտվեցին նաև Հայոց ցեղասպանությունը կազմակերպելու և իրականացնելու մեղադրանքներով:

ПРИЗНАНИЕ И ОСУЖДЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН В ОСМАНСКОМ ПАРЛАМЕНТЕ (НОЯБРЬ-ДЕКАБРЬ 1918 Г.)

МАРУКЯН А. Ц.

Резюме

В преддверье 101-ой годовщины геноцида армян внимание средств массовой информации было сосредоточено на выступлении армянского депутата в парламенте Турции Гаро Пайлана, представляющего прокурдскую Демократическую партию народов в Великом Национальном Собрании Турции. В своей речи (21 апреля) он выступил с критикой турецкой государственной политики отрицания геноцида армян и от имени своей партии предложил создать специальную парламентскую комиссию по расследованию обстоятельств смерти армянских депутатов османского парламента, ставших жертвами этого преступления в отношении армянского народа. В конце выступления им были перечислены имена армянских депутатов османского парламента и показаны их фотографии. Реакция турецких депутатов была более чем предсказуема. Вместо обсуждения предложения Пайлана они попытались учинить над ним физическую расправу прямо в парламенте. В противовес турецким тезисам отрицания геноцида армян Пайлан в качестве контраргументов приводил те доводы, которые в своих осуждающих речах использовали армянские депутаты на заседаниях османского парламента в ноябре-декабре 1918 года.

RECOGNITION AND CONDEMNATION OF THE ARMENIAN GENOCIDE IN THE OTTOMAN PARLIAMENT (NOVEMBER-DECEMBER 1918)

A. MARUKYAN

Abstract

On the threshold of the 101st anniversary of the Armenian Genocide attention of Mass Media has been concentrated on the speech of the Armenian deputy in the parliament of Turkey about the Genocide of Armenians. Garo Paylan representing pro-Kurdish Democratic party of people in the Grand National Assembly of Turkey in his speech on April 21 has scarified Turkish state policy of denial, has presented implementation of the Armenian Genocide and on behalf of his party has suggested to create the special parliamentary commission on investigation of circumstances of death of the Armenian deputies of Ottoman parliament who have become the victims of the Armenian Genocide. At the end of the speech he has presented the names of the Armenian deputies of Ottoman parliament and has shown theirs photos. Reaction of the Turkish deputies making the majority was more than predictable. Instead of discussion of the proposal of Paylan, they have tried to punish him physically directly in parliament. It is characteristic, however, that on the Turkish denial theses of the Armenian Genocide Paylan gave those arguments which in the condemning speeches were voiced by the Armenian deputies in their speeches in Ottoman parliament in November-December 1918 as counterarguments.